ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 03 մայիսի 2021թ.

2021 թվականի մայիսի 3-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության բնության պահպանության մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և նախագծման թույլտվություն տալու մասին որոշման նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Արգամ Շառյանը, Ավետիք Ասոյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Զինավոր Սարգսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և նախագծման թույլտվություն տալու մասին:

Համայնքի ավագանու որոշման նախագծի քննարկում:

Օրակարգի հարցի հետ կապված Դնիել Դանիելյանը ներկայացրեց, որ որոշման նախագիծը կազմվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ (***Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.***), և 31-րդ (***Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին.***) կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ (***Քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը համայնքի վարչական սահմաններում***)

հոդվածի, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի (*ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող ընտրեությունների, սպանդանոցների և ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար նախատեսվող հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված պարզեցված կարգով՝ միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:*) և հիմք ընդունելով Մնացական Գագիկի Գևորգյանի հայտը:

Սույն որոշման նախագծով առաջարկվում է՝

- ✓ Մնացական Գագիկի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0214-0019 ծածկագրով (վկայական N 22042021-07-0067) 0.09 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության շինություն կառուցելու նպատակով:
- ✓ Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

  1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0214-0019 ծածկագրով (վկայական N 22042021-07-0067) 0.09 հեկտար մակերեսով հողամասում պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության շինություն կառուցելու նպատակով օրենքով սահմանված կարգով Մնացական Գագիկի Գևորգյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք).
- ✓ նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և նախագծման թույլտվություն տալու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հայկ Վարդևանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արգամ Շառյան

_____ Ավետիք Ասոյան